«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-364-13.11.2019-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է բանկային ավանդի համար տոկոսները վճարել ինչպես ներդրման օրվա, այնպես էլ վերադարձման օրվա համար: Ներկայացված առաջարկությունն ընդունելի է մասամբ:

Այսպես, միջօրյա (overnight) ավանդ կնքելու հնարավորություն ստեղծելու նպատակով նպատակահարմար ենք համարում բանկային ավանդի համար տոկոսների հաշվարկն ավանդի ներդրման օրվանից սկսած, սակայն ոչ ավանդի մարման օրը:

Տվյալ մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ավանդի մարման օրը բանկն ավանդի միջոցներն օգտագործելու հնարավորություն չունի: Ինչպես ներգրավված ավանդի գումարը, այնպես էլ հավելագրված տոկոսներն ավանդի մարման օրը կանխիկ կերպով պահվում են դրամարկղում, որպեսզի բանկը հաճախորդի պահանջի դեպքում նրան վերադարձնի գումարը: Հետևաբար՝ արդարացված չէ մարման օրը բանկի կողմից չօգտագործվող միջոցների համար տոկոսագումարների վճարումը:

Բացի դրանից, առաջարկում ենք օրենքի նախագծում «հավելագրում» բառը փոխարինել «հաշվարկվում» բառով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշակի դեպքերում հնարավոր է նաև բացասական տոկոսով ավանդի տրամադրում, ինչը լայնորեն կիրառվում է արտասահմանում: